



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No 759-26/բ

« 06 » 07 2010

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1192-Ա/Ք  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 437-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածները

Հրամայում եմ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ.-ի դեկտեմբերի 6-ի <<ՀՀ կառավարության 09.11.2005թ.-ի հմ. 1933-Ն և 30.08.2007թ.-ի հմ. 1038-Ն որոշումներով հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների համապատասխանեցման մասին>> թիվ 1192-Ա/Ք հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի <<<<Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 9-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների և <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի թիվ 1038-Ն որոշմամբ հաստատված մասնագիտությունների համարժեքության ցանկում>> /այսուհետ՝ ցանկ/ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Ցանկի 104 տողի 3-րդ սյունակում՝ <<230200>> և 4-րդ սյունակում՝ <<Տեղեկատվական համակարգեր (ըստ ճյուղերի)>>, բառերը հանել:

2) Ցանկի 109 տողը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

090100	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	090100 230200	Տեղեկատվական տեխնոլոգիաներ Տեղեկատվական համակարգեր (ըստ ճյուղերի)
--------	----------------------------	------------------	--

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009թ.-ի մայիսի 12-ի <<ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի 1192-Ա/Ք հրամանում լրացում կատարելու մասին>> թիվ 437-Ա/Ք հրամանը:

Ա.Աշոտյան